վանքապատկան այգիները ջրելու համար։ Վանքի դիմաց Որոտնա գետի ձախ-ափին գտնվող Ցաքուտ վայրում պահպանվել են հնակառույց տաճարի մնացորդներ։ Այդ վայրը ողողվելուց հետո կոչվեց Վարդուտ։ Այժմ այդ աղբյուրները կոչվում են Ակներ և նրանց ջուրն անց է կացված դեպի Գորիս քաղաքը։ Զագ արմատը կրկնվում է անձնանունների մեջ ևս։ Այսպես, X դարի սկզբում խոշոր դեմք է եղել Զագիկ իշխանը՝ Ջիվանշիր իշխանի որդին Ջիվանշիր ու Վահան իշխանների հայրը։ Նա վկա է գտնվել այն վավերագրի ձևավորմանը և ստորագրմանը, որով ճիշտ որոշվում էին Տաթևի վանքի սեփականությունը կազմող հողերի սահմանները 906 թ.[6]։ Այսպիսով, ավելի գերադասելի կլինի Զանգեզուր անունը համարել Զագեձոր անվան աղավաղված ձև։

Պետք է հիշատակել այստեղ նաև այն նոր մեկնաբանությունը, որը վերջերս առաջարկել է լեզվաբան Արարատ Ղարիբյանը։ Նա կողմնակից է բացատրելու Սիսակ անունը որպես հին տեղական էթնիկ տարրի՝ Սի անունից առաջացած, որին հանդիպում ենք բևեռագիր արձանագրությունների մեջ Սի+ունի՝ Si+uni տեղանվան մեջ և ապա ավելի ուշ VII դ. մ. թ. ա. այդտեղ ներխուժած ժողովրդի սակ տարրի անվան միացումով՝ Սի+սակ։ Նրա ենթադրությամբ սակ արմատը, որը կրկնվում է Կուր գետի հովտում Ղարաբաղից և Զանգեզուրից ոչ հեռու սակերի Շակաշեն գավառի անվան մեջ, կարող էր փոխվել մի կողմից զոկ (Ագուլիս), մյուս կողմից ձագ ձևի և այսպիսով հիմք ծառայել նաև Զագեձոր–Զանգեզուր անվան համար[7]։

Ինչպես վերը նշեցի, Սյունիքի երկրորդ (պարսկական) ձևն էր Սիսական անունը, որի երկրորդ վանկի մեջ Ն. Յա. Մառն էլ գտնում է սկյութացիների հետ Անդրկովկաս ներխուժած սակ ազգության անվան արձագանք[8]։

---

[6] Օրբելեան Ստ., անդ., էջ 13, 208, 230, 273, 406, 517։

[7] Ղարիբյան Արարատ, Համառոտություն հայ բարբառագիտության, Երևան, 1941, էջ 241։

[8] *Марр Н.*, Избранные сочинения, т. V., էջ 47: